


# Սիսիանի Երիտասարդների Սպորտային Օլիմպիադա

Բյուջե

## Ծրագրի նպատակ

Խթանել առողջ ապրելակերպը, թիմային աշխատանքը և մրցակցային սպորտը Սիսիանի տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների շրջանում՝ կազմակերպելով բազմազան սպորտային մրցույթներ:

## Ծրագրի նկարագրություն

Նախագիծը նախատեսում է կազմակերպել մարզական խաղեր Սիսիանի շրջանի 10–12-րդ դասարանների աշակերտների համար: Մրցումները կանցկացվեն հետևյալ 6 մարզաձևերից՝

- Հեռացատկ տեղից (աղջիկներ)
- Պրես մարմնամարզական նստարանից (աղջիկներ)
- Վազք՝ 60 կամ 100 մետր (աղջիկներ)
- Ձգումներ պտտաձողից (տղաներ)
- Կշռաքարի բարձրացում՝ 16 կգ (տղաներ)
- Ձգումներ և պրես նստատեղից (տղաներ)

Միջոցառումը նպատակ ունի զարգացնել աշակերտների ֆիզիկական պատրաստվածությունը, կամային որակները և թիմային համագործակցությունը: Մրցումներին կմասնակցեն Սիսիանի շրջանի 16 դպրոցների 10–12-րդ դասարանների 455 աշակերտներ: Նախագիծը կնպաստի նաև ոչ պրոֆեսիոնալ սպորտի ակտիվացմանը տարածաշրջանում:

Մրցաշրջանի ըավարտին նախատեսվում է պարգևատրում՝ մեդալներով, պատվոգրերով, գավաթներով և սպորտային գույքով: Բացի այդ, կտրամադրվի սնունդ մասնակիցների, ուսուցիչների և կազմակերպիչների համար:

## Բյուջե

| Անվանում | Քանակ / նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Պատվոգրեր և շնորհակալագրեր | 69 հատ | 31,050 |
| Մեդալներ | 54 հատ | 24,300 |
| Գավաթներ հաղթող դպրոցների համար | 1–3-րդ տեղեր | 26,000 |
| Սպորտային գույք հաղթող դպրոցների համար | 1–3-րդ տեղեր | 390,000 |
| Սպորտային պայուսակներ մեդալակիրների համար | 54 հատ 3 հատ | 432,000 |
| Սպորտային պայուսակներ մարզիչների համար | 8,000 դրամ | 24,000 |
| Սնունդ մասնակիցների, ուսուցիչների և կազմակերպիչների համար | 76 անձ | 76,000 |

**Ընդհանուր**

Փոխարժեք՝ *1 ԱՄՆ դոլար = 375 ՀՀ դրամ*

**֏1,003,350**